Ս. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Աղնիւ բարեկամ Գրիգոր Սալտիկեանց [1])

Ձեր գրած նամակը ամսուս 9 թուականից ստացայ և շնորհակալ եմ որ զանցառու չէք ժամանակ առ ժամանակ գրաւոր կապակցութիւն ունենալ իմ հետ. դորանից օգուտ կայ և ձեզ և ինձ և ամենայն լաւ լառաջացած է միշտ աշխարհիս վերայ ազգային բարեկամական կապակցութիւններով, որ ափսոս շատ հաղուագիւտ են Հայերի մէջ, մինը գրել չիմանալով, մինը միշտ հիւանդ լինելով, և միւսը գրել իմանալով, բայց գրելու կամք չունենալով, և այլ հարիւրաւոր ծուռ ու լիմարական պատճառներով։ Շնորհակալ եմ ձեզանից որ ցոյց էք տալիս, թէ իմ ասած խօսքերը անպտուղ և անօգուտ չեն եղած ձեր համար. դուք չէք ծուլանում գրել ինձ, և ես ահա ապացուցանում եմ ձեզ, որ միշտ պատրաստ եմ պատասխան տալ ձեր գրուածին և փոխարինել ձեր պատիւը արժանի փոխարինով։

Պատերազմը դադարելու է. որովհետև հաշտութեան պայմանքը մարտի 18 թուականին (հին ոճով 30-ին) ստորագրվել են Փարիզի մէջ Գաղղիացոց և Ռուսաց կողմից. Ռուսաստանի գործակատարը հաշտութեան մասին եղած է գրաֆ Օրլովը. Բեսարաբիայի մի մասը պիտոյ է անցանէ դէպ ի Տաճկի կողմը. սեաւ ծովի վերայ պիտոյ է լինի ազատ նաւարկութիւն։ Բայց ամենից փառաւոր լուրը այս է, որ Տաճկի Սուլթանը իւր քրիստոնեայ հպատակներին պարգևել է ամենևին նոյն իրաւունքը, ինչ որ մինչև այժմ վայելում էին իւր բուն

---

[1]) Վերակոտում ենք տպագրել Ս. Նազարեանցի նամակների շարքը ներկայ համարից, որ մենք ստացել ենք մեր շնորհալի աշխատակից պ. Եր. Շահազիզից և ուրիշներից։ ԽՄԲ.

հաւատակից՝ տաճիկքը, այնպէս որ Քրիստոնեայքը կարող են ամենայն տէրութենական պաշտօններ ստանալ և միապէս կրթիլ և լուսաւորվիլ ինչպէս իւր յատուկ հպատակքը, Տաճիկների ուսումնարանների և համալսարանների մէջ։ Մեր հայերը շատ կը յառաջանան այն տեղ իւրեանց քանքարնեերով և աշխատասիրութիւնով։ Ահա քեզ եւրոպական ազգերի զօրութիւնը։ Հաշտութեան մանիֆեստը շուտով, կարծեմ, կը ստանաք։

[2]) Այժմուս, նոր թագաւորի քաղցր չնորհից և ողորմութիւնից մի փոքր աւելի ազատութիւն և համարձակութիւն լինելով, և ես ուզք խաղացուցի և գլուխ բարձրացուցի, մի հայկական օրագրի պրոժէքտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով ազգային Լուսաւորութեան նախարար Նօրովին։ Կարծիք ու լոյս կայ, որ այս մարդը բարի լինելով և ժամանակն ևս ձեռնտու լինելով, թոյլ տայ ինձ տպել այդ շատ հարկաւոր օրագիրը։ Երբ որ հրաման ստացայ հրատարակելու, այնուհետև կուղարկեմ և ձեզ այդ մասին արած ծանուցումը, և լուսով եմ որ և դուք վերահասու լինելով այս ձեռնարկութեան հանրաշահ օգտին և պտղաբերութեան, ջանադիր լինիք ինչքան կարելի էր շատ դուքքրիքցիա դտանել իմ օրագրի համար ձեր քաղաքումը։ Օրագրի բոլոր հանդամանքը կը կարդաք իւր ժամանակին ծանուցարար թղթի մէջ. ուրեմն այժմ պատճառ չը կայ երկարախօս լինել ձեր հետ այդ մասին։

Ողջունելով ձեզ ամենայն սիրով,

մնամ ձեզ լարգող

հայրենակից եղբայր Ս. Նազարեանց։

Մարտի 23-ին. 1856.

Մոսկվա.

Մեծապատիւ եղբայր

Գէորգ Սալտիկեանց.

Քրիստոս լարեաւ ի մեռելոց.

Մատուցանելով ձեր սիրելութեանը իմ գործի առաջին Հատորը, պարոն Հայրապետեանցի ձեռքով, խնդրում եմ քաղցրութեամբ ընդունել նորան որպէս սիրու և լարգութեան լիշատակ հեղինակի կողմից։ Որովհետև ձեր լինելութեան ժամանակը Մոսկվայի մէջ խոստացաք աշխատ լինել տարածելու

[2]) Այստեղից մինչև վերջ տպուած է «Նայլբանդեանց» գրք. էջ 56—7։

իմ գիրքը ձեր շրջակայքումը, և պատուիրեցիք ինձ 100 օրինակ ձեր գործակալի ձեռքով հասուցանել ձեզ դէպ ի Նախիջևան, ուրեմն և ես կուղարկեմ զորանց իւր ժամանակին մի արկղի մէջ փակած։ Պարոն Հայրապետեանից խնդրեցի նոյնպէս, որ ձեռնտու և գործակից լինի ձեզ ձեր աշխատութեան մէջ։ Գրերի գինը թէ ոսկէզօծ վալելչակազմերի և թէ միջակ կաշէկազմերի մասին գրեցի Պ. Հայրապետեանին և նորանից կիմանաք։ Կարծեմ, որ իմ սահմանեալ գիները շատ չափաւոր են. գոնեալ, այդ գնով վաճառւում են այս տեղ. նոյն իսկ գրքի նիւթը արժէ 2 մանէթ. 25 կոպ. արծ. կազմը հասարակների. բայց ոսկէզօծների և վալելչակազմների գինը, ըստ որում զոքա սակաւաթիւ ու առաւել պատուական թղթի վերայ տպած էին, $3^1/_2$ մանէթ. արծ։

Իմ օրագրիս մասին, կարծեմ որ շուտով կարող էի ձեզ մի վճռողական բարի համբաւ տալ. շատ աշխատեցի և դործ դրեցի իմ և բարեկամներիս բոլոր զօրութիւնը. այժմ պիտոյ է մեզ համբերել և լուռ։

Մի փոքր տհաճ եմ ձեր արածի վերայ, որ առանց իմ գիտութեանը առել էիք իմ պատկերը ֆոտոդրաֆի ձեռքից. աւելի քաղցր կը լինէր ինձ, ինքս մատուցանել ձեզ, ինչպէս որ ես ինքս հրամայած էի պատրաստել նորան։ Ցարդը այսպէս էր։ Բայց ձեր պատկերի համար շնորհակալ եմ ձեզ շատ և շատ։

Ձեզ

Ցարդող եղբայր

Ս. Նազարեանց.

Ապրիլի 5-ին. 57.

Մոսկվայ

✓ Ցարդելի բարեկամ

Գրիգոր Սալտիկեանց

Ձեր պատուելի նամակը անցեալ Ապրիլի 30 թ. ստացայ և ուրախ եմ լսելով ձեր առողջութեան լուրը։ Շնորհակալ եմ նոյնպէս ձեր բարեկամական սրտցաւութեան համար, թէ ինչու պիտոյ է այսպէս յետանալին իմ ծրարքը դէպ ի Նախիջևան։ Դրանց լուշանալու պատճառը այսպէս էր. պարոն Նալբանդեանցը որ պիտոյ է Բողդանովի ձեռքով հասուցանէր ձեզ

գրեանքը, չը կարողացաւ այնպէս շուտով գործ կատարել, ինչպէս ցանկալի էր. ապար, էգուց ասելով ինձ, թէ կը գալ և կը տանէ արդէն պատրաստած արկղքը և կը յանձնէ Բողդանովին, մնաց գործը մինչև ամսուս 13-ը. և ապար ահա, նոյն Նալբանդեանցի հոգաբարձութեամբ յանձնվեցան արկղքը Բողդանովին, ուղարկելու դէպ ի Նախիջևան։ Ի հարկէ շատ ցանկալի կը լինէր ինձ, որ գրեանքը շուտով տեղ հասած լինէին և վաճառվէին, մանաւանդ որ արծաթի կարօտութիւն կայ և ծախքեր շատ եղան այդ գրատպութեան պատճառով։ 300 մանէթ տուած եմ միայն կազմելու դանազան կերպով։ Իմ կողմից այսքան միայն կարող եմ ձեզ ծանօթացանել, որ արձակման հրամանը ստացվեցաւ մարտի 20-ին. և զատկի առաջին շաբաթումը պատրաստել էի արկեղքը ուղարկելու համար, ինչպէս ինձ պատուիրել էր պ. Նալբանդեանցը. բայց յետոյ անհոգ ու անխնամ թողվեցան նոքա իմ մօտ մինչև այժմ։ Ահա գործի ընթացքը։

Երկու արկղների մէջ դրած են հարիւր օրինակ, մինումը 52 և միւսի մէջ 48. կաչէկազմ օրինակները արժեն երկու-երկու մանէթ. 25 կոպ. և թղթակազմ օրինակները երկու երկու ման. 15 կոպ. Այս կոպէկները կազմի արծաթն են. նիւթը գրքի 2 ման. արծաթ. Այս տեղեկութիւնքը տալիս եմ ձեզ, յանձնելով գործը ձեր բարեմիտ և խոհական բարեկամութեանը, որ կարող էր տնօրինել ինչպէս բարի և օգտակար կը համարէր աշխատաւոր հեղինակի և իւր բարեկամի համար։

Բարի աւետիք տամ ձեզ. թագաւոր կայսրը անցեալ մարտի 17 թուականից տուել է իւր բարեհաճութիւնը իմ Հիւսիսափայլ անունով օրագրի համար, և լուսաւորութեան նախարարը, Մոսկվայի ցենզուրեան կոմիտէի ձեռքով, տեղեկութիւն է տալիս ինձ անցեալ Ապրիլի 29 թուականից, այս մասին, և շնորհում է ինձ թոյլտուութիւն հրատարակելու իմ օրագիրը, ստորադրելով նորան Պետերբուրգեան ցենզուրայի քննողութեանը։ Թոյլտուութեան դժուարութիւնը վերջացաւ ահա. մնում է մեզ այժմ յաղթելու մի այլ դժուարութեան, այսինքն մեր ազգի սառնասրտութեանը դէպ ի լուսաւորութիւն։ Ես քաջահաւատ եմ որ Դուք և պարոն Հայրապետեանցը գործ կը դնէք ձեր յարգը, պատիւը և աշխատութիւնը ճանապարհ տալու այս այդպիսի գործին ձեր երկրացիների

մէջ և ձեր շրջակայքումը. և թոյլ կտայիք ինձ ձեզ գործակատար կարգել այս մասին Նախիջևանի մէջ. Եւ կուղարկեմ ձեզի լայտարարութիւնը բիլետներով և դոցա վերայ դրած №№ տեսակների, այլքան ամսական ստանալի թերթերի համար. Գինը թերթացուցինք մի փոքր, սահմանելով փոխանակ 10 մանէթի 8 ման. արծ. Մոսկվայի մէջ. բայց հեռաւոր տեղերի համար որպէս ճանապարհի ծախք յաւելանալու են $1^1/_2$—2 ման.

Պ. Հալրապետեանցից նամակ չունիմ. առողջ է դա. խընդրեմ ինձանից շատ և շատ ողջունել այդ յարգելի պարոնը, և ասել նորան որ նորա շնորհած օգնութիւնը շուտով պիտոյ է գործ դրվի հայկական մատրիցների համար, որ պիտոյ է ստացվեն Վիեննայից Բարֆքնեխթ տպագրատեսի ձեռքով. Այս օրերումս վերքսելով կը յանձնենք նորան արծաթը.

Ամենայն յարգութեամբ ողջունելով ձեզ և ձեր ընտանիքը, մնամ ձեզ.

Պատուող

Մայիսի 13 թուակ. 57.
Մոսկվա

Եղբայր Ս. Նազարեանց.

Վերջին նամակի 10—19 տողերը տպուած են «Նալբանդեանցդրքի. էջ 57.